

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԵՌԱԳԻՐ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿՆԻ ՄԱՎԻՍԻ 5-ին, համազգային ժողովում կատարած կաթողիկոսական ընտրութեան օրը, Էջմիածնից տեղեկութիւն ստանալուն պէս, «Մուրճ»-ի խմբագրութիւնը հեռագրեց Նրուադէմ՝ «Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեանին. «Մուրճ»-ի խմբագրութիւնը շնորհաւորում է միաձայն ընտրութիւնը»:

ԳՈԳՈՂ «ՄՈՒՐՃ»-ում. Ներկայ համարում ընթերցողները տպած կը գտնեն ռուսաց դրականութեան հանճարեղ ներկայացուցիչներից մէկի, Նիկողայ Գոգոլի, գրած քննարկի մի նմուշ հայերէն թարգմանութեամբ. Նիկողայ Գոգոլի (ծնւած 1809 թ. վախճանւած 1852 թ.) անմահ գրած քննարկի մէկն է «Չիչիկովի արկածները կամ Մեռած հոգիներ» պոէմը, ուր հանճարեղ գրչով ռուս հեղինակը ծաղրում է ռուսցի կեանքի ականդակութիւնները. Այդ գրածքում դուրս բերւած տիպերից, սակայն, ամենից շատ լալտնին է Պիւշկինի տիպը, որ մի ժառոտ կալածատիրոջ տիպ է. Պատմութիւնը վերաբերում է ռուսաց Նախարարֆոմեան շրջանին, երբ դեռ եւս գոյութիւն ունէր ճորտութիւնը եւ երբ մի կալածք կազմում էին ոչ միայն հողը, այլ եւ ճորտ վերայ բնակւող ճորտ գիւղացիները, որոնց թւի համեմատ որոշւում էր եւ կալածքի արժողութիւնը. Տէրութիւնը մի քանի տասնեակ տարիներ մի անգամ այդ բնակիչների թաւհամարն էր անում, եւ այդ «բեւիղիակի» հիման վերայ էր որ մի կալածքում հաշւում էին ճորտերի թիւը, թէեւ տասնեակ տարիներ անցկացած լինեն այդ բեւիղիակից եւ շատերը նոցանից մեռած եւ օրինակ՝ հազար մարդուց միայն 800 հոգի մնացած լինէին. Կալածքը գնահատելու կամ հարկատուութեան համար այդ մեռած մարդիկ (մեռած հոգիներ — мертвые души) իբր կենդանի էին հաշւում, եւ ի հարկէ բեւիղիակից դէս ճորտ ծնւածները չէին հաշււում. Գոգոլը իւր հուշակատար պոէմակին «Մեռած հոգիներ» վերնագիրը դնելով, այդ ծիծաղալի կարգ ու կանոնն է ի նկատի ունեցել:

1861 թ. փետր. 19-ի հրովարտակոյն որպէս չափնի է, ճորտութիւնը Ռուսաստանում վերացաւ, հետեապէս վերացան նաև ալն կարգ ու կանոնները, որոնց շոշափում է Գողովը. բայց գրածքը ալնքան նշանաւոր է, որ պահպանեց իւր նշանակութիւնը նաև ընթերցման լեռով, իբրև անմահ նկարագիր մարդկային տիպերի:

Գողովի գրածքները բուն ռուսական ժողովրդական բաների և ոճերի շատ մեծ ճոխութեան և ոճի կորովութեան պատճառով ընդունած են որպէս դժար թարգմանելի: Ներկայ թարգմանութիւնը կատարւած է պ. Մկրտիչ Ղազարեանի ձեռքով, որ հրատարակում ենք մանրակրկիտ կերպով բնագրի հետ մի քանի անգամ համեմատած և վերադրած լինելուց յետոյ:

ԱՌԱՆՆՑ

ԴԱՒԱՆԱՆՔԻՒՆ՝ ՎԼԵՊԸ «Մուրճ»-ի անցեալ № 4-ում վերջանում էր «2 ապրիլի» փշատակարանով, որը սակաւն չէր ամբողջացած. ամբողջութեան և դիւրնթեւեղութեան համար ներկայ համարում արտատպում ենք ալը կտորը կցելով դորան նաև շարունակութիւնը:

Գալ № 6-ում կը վերջանալ «Առաջ դաւանանքի» վէպի առաջին մասը:

Անցեալ № 4-ում երես 578 գրած է մի խմբագրական ծանօթութիւն՝ պէսի մի դմ խօսքը բացատրող: Այդտեղ մի սխալմունք է պատահել. ալը բացատրութիւնը վերաբերում է ոչ թէ պեսիմիզմ, ալ սկէպտիցիզմ բառին, որ ալնքան չաճախ կրկնում է պ. Սենկևիչի վէպում: Եւ քանի որ պեսիմիզմ և սկէպտիցիզմ բառերը չաճախ գործ են ածւում ալը վէպում, աւելորդ չենք համարում դնել ալատեղ նոցա խակական նշանակութիւնները:

Պէսսիմիզմ, հալերէն՝ հոռետեսութիւն. ալըպէս է կոչւում ալն ֆիլոսոֆական աշխարհայեցողութիւնը, որի համաձայն աշխարհքը ի բնէ վատ է: Պեսիմիզմի հակառակ աշխարհայեցողութիւնը կոչւում է օպտիմիզմ, հալերէն՝ լաւատեսութիւն: Պեսիմիզմի հակառակ մարդը կոչւում է պէսսիմիստ, հալերէն՝ հոռետես, օպտիմիզմին հակառակ կոչւում է օպտիմիստ, հալերէն՝ լաւատես:

Սկէպտիցիզմ ալն աշխարհայեցողութիւնն է, որի համաձայն մարդս չի կարող հասնել ճշմարտութեան: Սկէպտիցիզմին հակառակ կոչւում է սկէպտիկ, որ սովորական մտքով անւանում են թերահաւատ կամ կասկածոտ մարդուն:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1892 թ. մայիսի 16-ին ընդհանուր ժողովի որոշումները.

1) Ընկերութեան գործունէութեան և դրամաշաւի տեղեկագիրը իւրաքանչիւր տարի տպագրել և քաղաքի անդամներին ուղարկել տարեկան ընդհանուր ժողովի նիստից առնուածն երեք օր առաջ:

3) Ընկերութեան իւրաքանչիւր իսկական և մշտական անդամը իւր ազատ ընտրութեամբ տարեկան հինգ ընտրուողներէ և ստանում. ահա անդամը, որ չի վճարել իւր անդամականութիւնը, իրաւունք չունի գիրք տոմարաւու Պատուի անդամներին տրուած է իւրաքանչիւր հրատարակութիւնից մի-մի օրինակ, Գաւառական անդամներին գրքեր ուղարկելը վարչութիւնը իւր վերալ է վերցնում, Ով իւր անդամակցած տարազ ընթացքում իրան հասանելի գրքերը չի ստացած, նրան վեց ամիս ժամանակ է տրուած գրքեր ստանալ մինչև իւր անդամակցած ժամանակը լուս տեսած գրքերից:

4) Պարտաւորական է ընկերութեան ըլլող հրատարակութիւններին մշտական երկ-երկու օրինակ ուղարկել Էջմիածնի Մալր-Գրադարանին և Գէորգեան ճեմարանի մատենադարանին:

5) Բոլոր հասարակական, ազգային, Ռուսաստանի և արտասահմանի ուսանողական, հալոց թեմական, ծխական դպրոցների գրադարաններին վարչութիւնը իրաւունք ունի իւր բարեհալեցողութեամբ Ընկերութեան հրատարակութիւններից նէր ուղարկել:

6) Ընդհանուր ժողովների որոշումները նոյն նիստում պիտի կարդացեն իրանց վերջնական ձևակերպութեամբ:

7) Ընկերութիւնն իւր դրամական կարողութիւնից չի կազմում անձեռնմխելի կամ անշարժ դրամապահութիւն:

Ծանօթութիւն: Ահա գումարները, որոնց նվիրողները չեն պարմանաւորում, դառնում են շրջանառու դրամ:

8) Վարչութիւնը իրաւունք ունի միաժամանակ ոչ աւելի քան մի հազար ընտրուող գիրք ապաւիկ ցրել գաւառներում վաճառելու համար:

9) Նոր անդամները, մինչև չը վճարեն իրանց անդամականութիւնը, չեն կարող մասնակցել ընդհանուր ժողովներին:

ՀԱՅՈՒՂԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ առաջին Տասնամեակը հանդիսաւոր կերպով տօնեց մայիսի 31-ին, ս. Նշան եկեղեցու դաւթում գտնող Ընկերութեան ուսումնարանում, Կարդացած ուղերձների թւում կար և «Մուրճ»-ինը, որ հետեւեալն էր.

«Մուրճ» ամսագրի խմբագրութիւնը, ուրախութեամբ խորտովանելով, որ Ընկերութիւնդ իւր տասնամիակ դոլութեան ընթացքում կարողացել է իւր օգտակէտութիւնը գործով ապացուցել, շնորհաւորում է Ընկերութեանդ Տասնամիակի տօնախմբութիւնը և ցանկանում է ապագայի համար տոկոս և լաւաջադէմ գործունէութիւն համաձայն կեանքի պահանջներին. ձգտելով ալդ պահանջներին համապատասխանելու՝ Ընկերութիւնդ կ'ապահովացնի իւր դոլութեան կենդանի լարատեութիւնը և ապահով կերպով կ'արժանանալ թէ խրախուսանքի և թէ երախտագիտութեան հասարակութեան կողմից, դորանով իսկ արդարացնելով ալն վստահութիւնը, որ հասարակութիւնը, ընդհանրութեան օգտի համար, պէտք է ունենալ դէպի կոշ հասարակական կոչումը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿԻ ալն մասը, որ վերաբերում է անցած ամիսներին, անցեալ համարում տպագրելու ժամանակ չունենալով, տպում ենք ներկայ համարում:

ՆՈՐ ՍՏԱՑԻԱՄ ԳՐԲԵՐ, Բացի Գրախօսութեան մէջ վիշաճներից, ստացւած են՝

ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ, ԼԵՒՈՆ. — «Տիգրանուհի», դրամա հինգ արարւածով: Արտատպւած «Մուրճ» ամսագրից. գինն է 50 կոպ.

ՍԻՊԻԼԵԱՆ, հայր Կղեմէս, Մխիթարեան ուստէն — «Դատաւորութիւն Ռուբենեան դրամոց». Վիեննա, 1892 թ., Մխիթ. տպար. գինն է 3 ռուբլի:

ԱԼՄԱՐԵՑԻ, ԱԼ. — «Գուստաւ Վադաս» Մոսկա, տպար. Մ. Բարխուդարեանցի, 1892 թ., գինն է 4 կոպէկ:

«ՄՈՒՐՃ»-Ի ՆԵՐԿԱՅ № 5-ը լոյս է տեսնում սովորականից աւելի մեծ և աւելի ուշ՝ անկետաձգելի լօգւածների պատճառով:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԳԱՋԱՐԵԱՆՑ